

# ԿՐՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ



## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՇԱՀԱՒՔ ԽՐԱՏՔ



1936

ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱ Ա Խ Ո Ւ Ց

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ա Հ Թ Ա Դ Ե Ա Խ Ո Ւ Ց Հ Ա Յ Ա Հ Ո Ւ Ց



# ԿՐՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ



## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՇԱԶԱԻՔ ԽՐԱՏՔ

A T 9018



ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆՁԻՆԵԱՆ - ԼԻՎԱՆՈՒՑ

## ՅԱՌԱԶԱԲԱՆ



Այս Հին եզրը նախապէս հրատարակուեցան ՀԱՍԿԻ մէջ։ Այդ առթիւ իբրեւ Յառաջարան հետեւեալ ծանօթութիւնը տուած էինք։

— «Արմաշի Դպրեվանքի Մատենագարանէն Չեռագիր, նօտրով, փոքրիկ տետրակ մը ծոցի, մնացած է թղթերուն մէջ։ Գուրգուրանքով պահած եմ զայն իբրեւ նուիրական մասունք մեր հոգեւոր և մտաւոր կրթութեան վառարանէն — աւաղ այժմ աւերակ — , որ արձարծուեցաւ Օրմանեանի և Դուրեանի շնչով։

Հասէմ մէջ կը հրատարակենք զայն, իսպառ կորուստէ ազատելու նպատառակով, նոյն ատեն մեր ընթերցողներուն տուած ըլլալու համար չարք մը գործնական և հաճելի պատուէրներ, հիմուած հին բժշկութեան փորձառութեան վրայ, ի նպաստ մարմնի տռող ջութեան։

Մենք այնպէս կը կարծենք որ-այս առողջապահիկ պատուէրներ գրի<sup>(\*)</sup> տած է Բժիշկ Միքայէլ Ռէստէն, ժժողու

վըրդական ոճով . որտվհետեւ Միք . Բէսուտէն ատեն մը բժիշկը եղած Արմաշչի վանքին , և նուիրուած բժշկական գրտականութեան :

Թէ ինչո՞ւ այսպիսի նիւթեր ստանաւոր կը գրուէին երբեմն ,— ասոր իրարեւ բացատրութիւն յառաջ կը բերենք հատուած մը Ռուրէն Բերբերեանի շատարժէքաւոր սւսումնասիրութենէն , զոր ըրած է Սէրամբէ Վարժառէտի կեան+ին վրայ , որու եղբայրն է Բժ . Միք . Բէսուտէն(\*):

—«Եթէ մի հեղինակ ուզում էր տելի համոզիչ անել իր արծարծած միաքը կամ իր բացատրածը , անպատճառ արծակին զուգընթաց գրում էր և ստանաւորով :

Երբ Նոր Նախիջեւանի տպարանում հայերէն—տաճկերէն բառարանը աըպուեց , շատ բառերի բացատրութիւնը տրուած էր ոտանաւորի ձեւով , երեւ տելի համոզեցուցիչ երեւցնելու համար . . .

Երբ Սերովբէի եղբայրը՝ Բժ . Միք . Բէսուտէնը հրատարակեց իր բժշկական բառարանը , շատ տեղ ցաւերի նկարազրութիւննը , գարմանը ու մանաւանդ իր խորհրդածութիւնները հիւանդութեան ու մահուան մասին՝ ոտանաւոր ձեւով էր արտայացտել :

(\*) Տե՛ս Հայրենիք Ամսագիր Ժրդ Տարի , Թիւ 7, էջ 119, Ա. Սիւնակ:

Չափաբերական ձեւը , առում ենք ,  
այն ժամանակուան հայերի համար մի  
առանձին բարձր պատուանդանի վրայ  
էր : Այն աստիճան որ քաղաքի քահաւ  
նաները անզիր էին արել երկար տարի-  
ներ նոր Նախիջեւանի հոգեւոր կառա-  
վարութեան պատկի մասին մի հրամանը՝  
սահնաւորի ձեւով զբաւած» :

Չուզեցինք որ այս օդակար իրադաեր  
ցրուած մնան ՀԱՅԱԿԻ մէջ , և զայն մատ-  
չելի ընելու համար մեր սիրելի ժողո-  
վուրդին՝ ձեւացուցինք այս փոքրիկ  
տեսրակը , անցընելով զայն մեր Կրհա-  
կան Մատենադարանի շարքին . որովհետեւ  
ճշմարիտ առողջապահութիւնը հիմնուած  
է ժողովրդիւն և շահաւորութիւնն վրայ , իսկ  
այդ երկու պայմաններ՝ կրօնական բարո-  
յագիտութեան հիմնաքարերն են :

Ասկէ զատ , այս խրատները տուող  
Բժիշկը իր բոլոր էութեամբը քրիստոն-  
եայ մըն է որ Աստուծոյ երիեղը պայման  
կը զնէ իր խրատներուն սկիզբը , որպէս  
զի նախ հոգին առողջ պահուի , որուն  
սերտիւ կաղուած է մարմնի առողջու-  
թիւնը :

ԲԱԿ

## **Շահօրութիւն**

Այս տեսրակը միամետ զրչէ եղած չէ: Մկիզքէն  
մինչեւ էջ 12 «Գինին պարտի լինել զօրել, զունով  
զեսէցիկ» խոշոր հօսր է, իսկ անկից մինչեւ էջ 17,  
դարձեալ հօսր, տարբեր զրչէ մինչեւ էջ 18,  
Զովարար դեղ հումբայի վերջը: Մնացած դեղա-  
զիրներ յաւելուած են յետոյ, իւ յայտնի է որ  
բառեակներու հեղինակն չեն ատոնի:

**Օգտակար եւ շահաւետ խրատք առ ի  
պահպանութիւն առողջութեան,  
եւ առ ի կեալ առողջ ընդ երկար  
ժամանակ**



Զգուշանալ պարտ է ըստ կարի ի պահ-  
պանութիւն առողջութեան, ո'չ միայն զի  
ապրեսցուք առանց հիւանդութեան, այլեւ  
զի լաւագոյն եւս ընծայեցուսցուք զանձինս  
ի ծառայութիւն մեծվայելչութեանն Աստու-  
ծոյ՝ նաեւ ըստ մարմնոյ վասն որոյ իւրա-  
քանչիւր ոք պարտի փոյթ տանիլ վասն ան-  
ձին առողջութեան, և ի գործ զնել զամե-  
նայն պատշաճաւոր միջոցս, և յարգել զգար-  
մանս և զիրատս աւանդեալս մեզ ի մեծա-  
մեծ հեղինակաց, մա՛նաւանդ ի դերիմատն  
Յաւիկենայ. յորոց զոմանս յառաջ բերցուք  
յառաջիկայդ:

Բայց սկիզբն արասցուք ասել ինչ, նախ՝  
զառողջութենէ հոգւոյ, և ապա զմարմնոյ:

Դու յԱսուծոյ սիրով երկի՛ր.  
յաներկիւղից՝ ի բաց վախիր.  
մի՛ չար մարդկան՝ ընկերութեամբ,  
զԱսուած, զիոգիդ՝ կորուսաներ:

Նախ քան զամենայն պարտ է սիրել  
զԱսուած յամենայն սրտէ, յամենայն անձ-  
նէ, և յամենայն մտաց, և փախչիլ յայնցա-  
նէ, ոքք չերկնչին ի նմանէ. վասն զի ընկե-

րութեամբ չաբաց՝ կորուսանէ մարդ զԱսու-  
ուած, և զդատապարտութիւն հոգւոյն յան-  
ձին բերէ:

ի պակասել՝ նեղ բժշկաց,  
սրբի հանգիս՝ և ուրախ կաց,  
և յափառու՝ զզուշուրեամբ,  
ի կերակրոց՝ հըրաժարեաց:

Ուր նուազութիւն է բժշկաց՝ ի գործ զիր  
զայս երիս: Զանա՛ նախ՝ պահել միշտ ըզսիրտ  
քո ուրախ և զուարթ: Երկրորդ՝ վոյթ տար  
ունիլ ըզհանգստութիւն և ըզհանգարտու-  
թիւն հոգւոյ և մարմնոյ: Եւ երրորդ՝ պահեա  
զբարեխաւոնութիւն ի կերակուրս. և չանա՛  
յառնել ի սեղանոյ որչափ և հնար է՝ ունելով  
զեռ եւս ախորժակ ուտելոյ:

ի յառնելն ի յանկողնոյ,  
վասըն աչաց՝ զօրանարոյ,  
ընդ ցուրտ չրով՝ և ձեռք յաճախ,  
մի յուշացին լուանարոյ:

Սասարիկ օգտակար է լուանալ՝ յամինայն  
առաւօտու զերես և զաջս, եւս և զձեռն  
բազում անգամ ցուրտ ջրով. որով զօրանայ  
ուզելոն, և պատճառի սրատեսութիւն ա-  
չաց. և յաճախութեամբ լուացման՝ պահպա-  
նի առողջութիւն:

Յառաւօտու՝ մինչ ով յառնէ.  
զամդամս իւր՝ հեղիկ ձըզտ.  
և ձեմելով կարեաց մարմնոյն՝  
շարժումն տուեալ՝ բնուրեանն օգտ:

ի յառնելն ընդ առաւօտն յանկողնոյ,  
պարս է մեղմով իմն ձգտել զանդամս իւր՝

և գորքը մի ճեմել, զի այդպիսի չարժումն  
նպաստէ, և ճանապարհ հորդէ բնական կար-  
եաց մարմնոյն, և զմարդն պահէ առողջ և  
կորովի:

Յես զգենրոյ՝ զիերս սահսրել.  
զադ ատամանց՝ ներել մայրել.  
ոյինչ նուազ՝ և ուղեղան,  
և անդամոց՝ և նպաստել:

Հարկաւոր է սանտրել զհերսն ընդ առա-  
ւոտն, և ողողեալ մաքրել զատամունս, յո-  
րոց ծագին պէսպէս բարիք և օգուտք: Բա-  
րիք առաջնոյն են, զի պահպանէ զգլուխն  
մաքուր, և թեթեւ ի կեզտ հիւթոց. բանայ  
զծակտիս մարմնոյն, յորոց ելանեն թանձր  
ոգիք. և տեսութիւն աչաց պայծառանայ՝  
ազատ լեալ յայնսպիսի աւելորդ հիւթոց: Իսկ  
օգուտք երկրորդին են, զի բառնայ զադե-  
ղութիւնս լնտերաց, որք ապականեն զշուն-  
չըն, և խանգարեն զստամոքսն, յորմէ զհետ  
գայ և խանգարիլ սնընդեանն. որով ելեալ  
անկարդ հիւթոց յուղեղն՝ ամբոխեն զնա, և  
միասնեն:

Սեղան անկարգ՝ առանց աղի.  
որ օքտակար՝ ստամփի.  
անցեալն զյափի՝ արավեաս,  
և ոչ կերկեաց համտու լիցի:

Նախ քան զամենայն՝ պարտ է գնել զազ  
յամենայն սեղանի, որ եւ ի կերակուրս չտ-  
փաւորապէս արկեալ՝ օդտակար է յոյժ. նը-  
պաստէ մաքսողութեան, բանայ զախորժակ,  
և սպառէ զաւելորդ հիւթոց: Բայց չափազանց  
աղն՝ լինասէ տեսութեան աչաց, չորացուցա-

նէ դհարկաւոր խոնաւութիւն նորա, ձնանի  
ընդ բոլոր մարմինն զմարմաջ, և յորդէ ըդ  
կծու զկիղիչ և զվնասակար հիւթու:

Ընկոյզ ձկան՝ վերայ կերեալ.  
պանիր մտյ՝ համադամեալ.  
զարմանալի օգուտ տեսցես,  
յագան ձեռաց՝ զայն ընկալեալ:

Յետ ուտելոյ զձուկն՝ լաւագոյն է ուտել  
ի վերայ ընկոյզու, զի սա ծախէ զմաղասն, զոր  
պատճառէ ձուկն. օգնէ ստամոքսին, և զօ-  
րացուցանէ զտեսութիւն աչաց: Իսկ զկնի  
մոյ պարտ է ուտել զպանիր, որով կնքի  
ստամոքսն, և մարսողութիւն զօրանայ. բայց  
պարտի լինել սակաւ ինչ:

Մաղասայնոց՝ օդտակար է հին պա-  
նիրն: Իսկ մաղձայնոց՝ պանիր թարմ, որ չէ  
այնչափ աղի:

Հացն լիցի՝ լաւ խմորեալ.  
յոյժ ծակուսկն՝ և յաջ եփեալ.  
մի՛ չերմ կերեալ՝ զցես զիկ,  
դեղնաշորքն՝ և նիմարեալ:

Պարտ է հացին լինել խմորեալ և աճե-  
ցուն, քաջ եփեալ և ծակուսկէն: Բայց չէ  
բարի ուտել ջերմաջերմ. զի գրգռէ զձարաւ,  
պատճառէ զխցումն մանրերակաց, և հասա-  
րակօրէն ապականէ զգոյն երեսաց, և ձնանի  
զջերմախտ:

Գինի ազնիւ՝ կենաց տածիչ.  
բնուրեան մարդոյ՝ զօրացուցիչ.  
բայց մինչ ըմպես՝ և ոչ յափով,  
լիցի ժեզ հուր ապականիչ:

Գինի աղնիւ օգտակար է և պահպանիչ կենաց. և չափաւորապէս արբեալ՝ աճեցուցանէ զբնական զօրութիւնս: իսկ չափականցն վնասէ գլխոյ, շփոթէ զգայութիւնս, խափանէ զիշողութիւնս, խանդարէ զիմացականութիւն և յիմարեցուցանէ: Եւ բաց յայսցանէ, գրգռէ զբարկութիւն, ամբոխէ զուզեղն, տկարացուցանէ զջիլս, նուազեցուցանէ զուժեղութիւն, ապականէ զաղնիւ հիւթս. փտտեցուցանէ զներքին մասունըս, և կարճէ զկեանս: Վատահամբաւ առնէ զանձն, և զամօթի հարկանէ զազգատոհմն: Յուշ լիցին քեզ միշտ՝ զոր ասաց Դիմոսթենէս. զի ի հարցանել զնա ոմանց, թէ զիսրդ հասեալ էր յայն աստիճան իմաստութեան, ետ պատասխանի, թէ՝ ոչ երբէք ծախեալ էր Այնչափ վասն զինւոյ բնաւելոյ առ ի սնանիլ, որչափ վասն ձիբոյ վառելոյ առ ի ուսանիլ:

Դու յետ ճաշուն՝ յուն մի՛ ինդրեր.  
իսկ թէ նիրհես՝ զեր մի՛ նեղեր.  
եւ թէ ընրես՝ քարց հազար յայլ,  
ի յանկողին՝ մի՛ մտաներ:

Զկնի ճաշուն խնդրեա՛ դադար, կամ ճեմել հանդարտ թէեւ իցէ սակաւ: Եւ մի՛ երթար յանկողին. վասն զի է վնասակար, և նիւթէ զիցումն մանրերակաց. պատճառէ ըզջերմ, և զհարբուխ, եւս եւ խափանէ զախորժակ. բայց փոքր ինչ նիրհելն՝ ոչ վնասէ: իսկ զկնի ընթրեաց բարեգոյն է միշտ ճեմելն, կամ սակաւ մի յայլ ինչ շարժումն զբաղիլն, ապա թէ ոչ՝ կրեսցես զմեծ վնաս: Որպէս արդ ի մօտոյ լուիցես:

ի մեծանաց՝ մեծ ընրեւաց.  
միշտ ստամու՝ պատիժ կրեաց.  
երե կամիս՝ բերեւ զիշեր,  
բերեւաբար՝ միշտ ընրեւաց:

Եատ ուտելն յերեկոյին ի յընթրիսն՝  
պատճառէ զմեծ ծանրութիւն ստամոքսի. և  
այնչափ լիցի չարագոյն, որչափ մտանելն  
յանկողին իցէ վաղագոյն: Վասն զի յոյժ ան-  
հանգիստ առնէ զմարդ, մինչեւ չներել նմա  
ննջել. որեւ ծանրացուցանէ զգլուխն, և  
պատճառէ զմեծագոյն տաղտկութիւն. Բայց  
փոքր ինչ շարժմամբ՝ մարթ է յայսմ ամե-  
նայնի դարման մատուցանել:

Փոփոխեացէ՝ զգուշուրիւն.  
զինչ եւ յից՝ սովորուրիւն.  
Հիփոկրատէ՝ ոչինչ զօրէր,  
րէ չէր ախտից՝ փոփոխուրիւն:

Առ ապահովութիւն առողջութեան կա՛ւ  
քեզ վահան զգուշութիւն և զժուժկալու-  
թիւն, ո՛չ միայն յուտելն և յըմպելն, այլեւ  
ընդդէմամենայն սովորութեանց և մարմնա-  
ւոր ախտից: Բայց որպէս ասեն ի հասարա-  
կի, թէ չէ պարտ մարդոյ միանգամայն առ  
մի նուագ ի բաց թողուլ զսովորական աշ-  
խատութիւնն, և տալ զանձն ի դատարկու-  
թիւն, որ լինիցի նմա պատճառ կսրուսանե-  
լով զառողջութիւն. նոյնպէս ասելի է. և նո-  
ցա, որք սովոր են ուտել և ըմպել չափա-  
զանցօրէն: Զի ասի թէ, սովորութիւն է եր-  
կրորդ բնութիւն:

Գինի ազնիւ՝ գեղեցկատիպ,  
զօրեղագոյն՝ այլ ոչ տըշիպ.

մայրէ զարիւն՝ որ քէ ունի  
զնոտ անոյշ՝ զվարդասիա:

Գինի պարտի լինել զօրեղ, գունով գեղեցիկ, և անուշահոտ: Զօրեղ գինին չափաւորապէս արբեալ՝ օգտակար է առողջութեան մարմնոյ և մննդեան: Գինին գեղեցիկ գունով, ախորժելի է և զիւրաւ տարրանայ ընդ մարմին: Խսկ անուշահոտ գինին՝ յաւէտ զօրացուցիչ է կենասական զօրութեան, որ և մաքրէ զարիւն, և ծնանի զնուրք ոգիստ:

Միալն այծու՝ նապատակի,  
զոյզ ընկ եզան՝ բանձրամազի.  
և մաղմային՝ եւ յարացաւ,  
վնասակար՝ հիւանդոտի:

Միսն նապաստակի, եզան, և այծու՝ չեն  
բարի ի պահպանութիւն առողջութեան. վաս-  
սըն զի այսովիսի միսք ծնանին զիւանձր հիւ-  
թրս, և զմաղմային արիւն. և են կարծր ի  
ծասկել, ծանր ըստ ախորժակաց, և զժուա-  
րամարս: Վասնորոյ զի՞նչ և լիցէ միս, որոյ  
կարձր են մազք՝ չեն ինչ այնչափ առողջ,  
այլ յաւէտ այծենին, յորմէ պարտին սաստիկ  
զգուշանալ ցաւագար հիւանդոտքն:

Յոռեկոյն և յան զայծենի,  
առանց զիւեոյ՝ միս խոզենի.  
ո՞չ արացկ՝ ոչինչ վնաս.  
քէ մատուցի՝ երմա զիմի:

Եթէ զկնի ուտելոյ զմիս խոզիւ արցես  
ըզպարզ չուր, մեծագոյն վնաս կրեսցես:  
Բայց եթէ առցես զչափաւոր գինի, լիցի քեղ  
օգտակար և առողջարար:

ի ճաշել յո՞ւ կեր յայլ ընդ յայլ. (\*)  
 զոյց ընդ նմին՝ ա'ր այլ ընդ այլ. (\*\*)  
 ձու դիւրամարս՝ երկ քարմ է,  
 որոյ նման՝ ոչ զոյ ինչ այլ:

ի ճաշելն պարտ է ուտել հանդարտօրէն,  
 և միանգամայն զոյդ ընդ նմին ըմպել մէջ  
 ընդ մէջ, որպէս զի դիւրաւ անցցէ կերա-  
 կուրն ընդ կոկորդն զառ ի վայր. և ստա-  
 մոքսն տրամադրեսցի ընդունել զայն՝ յաւէտ  
 ախորժակաւ: Ըմպել զծու թերիսած՝ օգտա-  
 կար է, եթէ թարմ իցէ. զի դիւրամարս է.  
 մաքրէ զարիւն, և զօրացուցանէ զտկարաց-  
 եալ ծերս և զնորոդ յարուցեալս ի հիւան-  
 դութենէ:

Յետ ըմպերոյ՝ ըզբարըմ ձու,  
 Թէ եր եփեալ՝ թերհաս խաշու,  
 Արք ի վերայ՝ զանոյշ զինի,  
 Զի սննդեան՝ և շահածու:

Յետ ըմպելոյ զթարմ ձու՝ ոչ է անտեղի  
 ըմպել ի վերայ զսակաւ ինչ ազնիւ գինի, որ  
 յոյժ նպաստէ ձուոյ թափանցել սննդեան  
 անդամոց:

Զոյց ընդ զինոյ՝ մուտք բաղանեաց,  
 նաեւ հատումն իսկ երակաց,  
 յընդ նուրք իրօֆ հըսկելն անուն,  
 Եիւրեն սասիկ՝ վընաս աչաց:

Բաղանիքն, գինին, և երակ հատանելն,  
 յոյժ մնասակար են աչաց. վասն զի ցամա-  
 քեցուցանեն զկարեւոր խոնաւութիւնն, եւ

(\*) Այսինքն՝ յութիկ յութիկ. (\*\*) ումպ ումպ:

այս այնչափ՝ մինչեւ մարթ է կորնչիլ տեսութեան։ Այլ ի վեր քան զամենայն հսկելն ի գիշերի, մանաւանդ՝ եթէ ուսման և ընթերցման գրոց պարապեսցի. կամ եթէ այլ ինչ մանր և նուրբ իրօք լիցի պատաղել, և հարկ իցէ անթարթ հայեցիւք սեւեռել զաշս ի նոսա՝ բերէ զմեծ վնաս աչաց։

Ժուժկալուրեամբ՝ կերակրոյ.

Միանգամայն՝ եւ լինպելոյ.

Նոյն եւ լինոյ՝ զչափ եղեալ,

Խափանեցի՝ իջուած զըլիոյ։

Ժուժկալութիւն ի կերակրոց և յըմպելեաց, և մանաւանդ բաւականանալն չափաւոր քնով, պատճառեն զչորութիւն, և խափանեն զիջուածս աչաց և գլխոյ. վասն զի սոքա երեքին միշտ սպառեն զաւելորդ հիւթըս։

Մայրէ արմաս՝ սուսգեն խոտոյն,

Կփեալ զինեաւ՝ զադս ատամոյն,

Բզցաւ նորա եւ լինդերաց,

Ողողեալ բառնայ՝ ըզիոս շընչոյն։

Արմատն սուտգեն(1) խոտոյն եռացուցեալ և եփեալ սպիտակ գինեաւ, զօրացուցանէ զատամունս, և փարատէ զցաւս նոցա և լընտերացն. և տայ չնչոյն զանուշահոտթիւն, ողողելով և լուանալով զբերան։ Երկիցս կամ երիցս յամսեանն։

Ազնուագոյն և փեգենայ,

որով կապեալ այժ զօրանայ,

---

1. Սուտգեն, իտոլերէն՝ բօքօմա՛լ' օ կամ բերեմա՛լիօ. Տնկրն. սիւտիւկէն։

եւ կամ եփեալ զայն ի գիւնի,  
երէ զայսն ո՞յ լուանայ:

Զփուղձն կամ զտերեւն վեգենայի(2) զը-  
նելն և կապելն ի վերայ աչաց. կամ լուանալն  
զաշս գինեաւ, յորում եփեալ իցէ վեգե-  
նայն, օդասկար է աչաց. և այս զարատե-  
սութիւն և զզօրութիւն անշփոթ խոյանալոյ:

Սամիր, վերբեիկ՝ ծիծեռնախոս,  
փեզենայ, վարդ՝ անուշանոս,  
չուրի կազմեալ՝ ի սոցանե,  
չնեալ մաժրէ՝ զայաց աղօս:

Զուրն կազմեալ ի հինգ խոսոց աստի,  
որք են սամիթ(3), վերբնիկ(4), վարդ, ծի-  
ծեռնախոս(5), և վեզենայ. մեծամեծ օ-  
գուտս ունի և զտրմանալի շահաւեսութիւ-  
նըո վասն աչաց. զի այս չուր զօրացուցանէ,  
որէ և պայծառացուցանէ զտեսութիւն:

Հատ մահամիտյ՝ սերմըն փորդիկ,  
օգտակար է՝ զլոյ նասիկ.  
բազում ախտից՝ և դեղ դարման,  
զօրութիւն իւր բազմապատիկ:

Հասն մանանխոյ(6), ունի զջերմութիւն  
երից կամ չորից աստիճանաց, և պարտ  
է քաղել զնա ի նուազման լուսնոյ, զի յայն-  
ժամ լինի բարեգոյն, և պահի եւս ընդ եր-

2. ԵՏ. ոռ'ւրա, ՏԱԼ. սէտէֆ օրու:

3. ԵՏ. մինօքիօ'. ՏԵԼՐԻ. Ո.Վ.ՂԻԱՆԻ:

4. ԵՏ. եւ լատիներէն, վերալ'սն:

5. ԵՏ. չէլլէօ'լիրա. ՏԱԼ. նիլալիէ:

6. ԵՏ. սէ'նափիէ. ՏԱԼ. խարտալ:

կար: Սա վասն բուռն զօրութեան իւրոյ կծէ զոնդունս և տայ փոնգալ: Թորէ զարտօսր յաչաց. թեթեւացուցանէ զգլուխն, քարշէ զառ ի վայր և թորեցուցանէ ընդ ոնդունս զիջուածս գլխոյ: Բժշկէ զհիւանդութիւնս պատճառեալս ի մաղձային հիւթոց. օգտէ անդամալուծութեան, լուծանէ ըզմիզարգելութիւն, խօրտակէ զքարն՝ եթէ դացի ընդ անցս նորա, առողջացուցանէ զտենդն քառօրեայ, նպաստէ մարտզութեան, և վարատէ զցաւ ստամոքսի զպատճառեալն ի ցրտոյն:

Յոյս ծանուցեալ՝ և եղեսպակ,  
ասել իր՝ և կու սպասեակ,  
զի պահապան՝ և բնուրեան,  
և դիմակալ՝ ախսից համակ:

Ա 90/8

Այնչափ է զօրութիւն եղեսպակ(7) խոտոյ, մինչեւ մարթ էր ասել, թէ որ զայն ի դորձ ածցէ՝ հազիւ երբէք հիւանդասցի. վասն զի սաստիկ առողջարար է եւ օգտակար մարդկային բնութեան: Յայնմ սակս եղաւ անուն նոր եղեսպակ՝ իբրեւ թէ եղեւ սպասեակ՝ այսէ, պահապան մարդկային բընութեան:

Փուղձ անանիսոյ՝ սպեղանի,  
որդանց մանաց՝ որովայնի,  
և կատաղի շան խածուածոյ  
ազնիւ դարման՝ և դեղ լինի:

Փուղձն անանիսոյ(8) արբեալ՝ մեծապէս

7. ԵՏԼ. սալվի'ա. ՏԵԼ. ՏԻԾ ՕՐՈՒ:

8. ԵՏԼ. ՄԵՆԴԱ. ՏԵԼ. ՆԱՅԻ:



նողաստէ ընդդէմ խածուածոյ կատաղի շանց։  
Այս բոյս սատակէ և զճճիս կամ զորդունս ո-  
րովայնի. եթէ փուղձ նորա կամ տերեւն մա-  
նրեալ ի փոշի՝ արբցի ընդ սպիտակ գինւոյ։

Արդ զգոյշ լեր՝ դու յըմպելոյ,  
ի մեջ անկեալ՝ ժամ կերակրոյ,  
զի զուց ոչ հիւանդասցիս,  
երկ յըմպես՝ քարց ծարաւոյ։

Ապա՝ կալ քեզ զայս գիւրին կանոն առ  
ի պահպանութիւն առողջութեան։ Մի՛ ինչ  
ըմպեր զկնի ճաշուն ի միջանկեալ ժամս՝ մին-  
չեւ ի ժամ յետագայ կերակրոյ. և կամ գէթ  
մի՛ ըմպեր մինչեւ ցերիս կամ ի չորս ժամս  
զկնի կերակրոյ։ Վասն զի ջուրն արբեալ  
նախ քան զմարսել կերակրոյ՝ խանգարէ  
զստամքսն, պատճառէ ըզ մաղաս. ծնանի  
զինասակար հիւթս, ծանրաբեռնէ զմար-  
մինն, և խափանէ զախօրժակ։ Ուստի եթէ  
բազծաս պահպանութեան առողջութեանդ՝  
սակաւս արբցես, և զայն՝ ոչ առանց ծարա-  
ւոյ։ Ապա պահեալ զայսոսիկ խրատս՝ կամ  
ոչ, և կամ ուր ուրեմն հիւանդասցիս։

### Գեղ ինչ վասն ատամնացաւի, եւն։

Ա՛ռ մէկ տրամ կէօղ թաշի, կըակի վրայ  
երելէն յետոյ զայն՝ ծեծես ալիւրի պէս և  
շաղվէ մէկ հաւկըթին ճերմկուցով. և ծայրը  
քիչ մը բամպակ փաթտած աւելին չէօփը  
թաթղէ ու ցաւցած տեղը զգուշութեամբ  
քսէ, խսկոյն կը թմրեցընէ։

**Զովարար դեղ հիւմմայի:**

Հինգ հատ բարակուկ կեղեւած լիմօնը  
լու բարակ ռէնտէէն քաշէ ու հարիւր տրամ  
լաւ հինայով մաճուն ըրէ . եւ թող մնայ այս  
մաճունը մէկ սահաթ ու կէս և կամ երկու  
սահաթի չափ՝ որ թթուի, մայալանմիշ ըլլայ :  
Եւ յետոյ գիր ձեռքերուն մէջը և ոտքե-  
րուն տակը՝ ու կապէ . թող մնայ վրան քսան  
և չորս սահաթ : Աստուծով կրակը կ'առնէ և  
հիւանդն հանգստանայ :

**Աերպ շինելոյ զշինուկ կարին  
առ ի մաքրել զարիւնն**

500 տրամ խարասղըրի կաթին մէջը 30  
տրամ ջուր լից ու կամ հողէ պտուկի և կամ  
կլայեկած ամանի մը մէջ եփէ հանդարտ .  
Երբ որ կըսկսի եռալ նէ՝ լից մէջը 12 տրամ  
կարմիր թարթար՝ որ կտրածին պէս վար  
կ'առնես ու սըխ կտաւով մը կը քամես և  
թէլֆէն կը թափես և յետոյ շինուկը 8 հատ  
հաւկըթին ճերմըկուցովը աղէկ մը տրորէ, և  
այս բաղադրված շինուկը նորէն թէճիրէով  
եփէ . երբ որ կը կըտրի՝ վար առ ու Յ զաթ  
թիւլպէնտով մը սիւզմիշ ըրէ : Այս թէրթը-  
պին չորս բային մէկը՝ մէկ մարդու մը  
խմելու ձեռք կուտայ մէկ ժումին . մինչեւ  
տասը առտու խմէ թաղէ թաղէ նոր շին-  
ված . որ չորս մարդու կ'օգտէ : Թէ որ կը  
կամիս՝ երկու օրէն յետոյ՝ երրորդ օրը կէս  
տրամ խաշնդեղ ու ռէվէնտ խառնէ . լաւէն  
ըլլայ : 5երրդ առտուն տրամ մի խառնէ  
մինչեւ ժերրդ առտուն :

**Առմին Եկար բաշելու դիւրին կերպ**

Սինէմէքին լաւ մը եփելով ջուրը առ ու  
հինայով շաղվէ. բայց ըզունկներն կտրած  
ըլլաւ:

**Այլ իմն կերպ ի մասրել զարիւնն,**  
**զոր առաք ի Շառելի բժշկեն:**

Յ հատ քէօք հինափայի և 25 հատի  
չափ բաչուկի ծաղիկը կամ նորին 2 հատ  
արմատը՝ շաքարի գըրքալով մը քթանի հուն-  
տին հետ 100 տրամ ջուրով եփելէն յետոյ  
մինչեւ կէսը մընայնէ վար առնելու քամելու  
է. ու պաղելէն յետոյ՝ մէկ տրամին երեքէն  
մէկ մասը քիւքիւրտ չիչէկին ալ մէջը խառ-  
նելու [հ] մայիսին ութը կամ տասը օրը ա-  
ռաւօտները խմելու է. մէկ թէրթիկ բաւ է:

**Օգտակար մէկլէմ դանակի, խուրշունի,  
շիպանի եւն, բաց ի սրբանայէն՝ այս է:**

10 տրամ մեղրամոմ լաւ, 5 տրամ սա-  
պօն կիրիտ, 15 տրամ իւղ ձիթոյ, 1 տրամ  
պէմպիկ խոտի փոշին իրար խառնէ. կը բա-  
նեցընէ և կը չորցընէ:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046630

(204.)

A  $\frac{1}{9018}$

---

**ԳԻՆ 1 ԳՐԱՆՔ**

---